

ԱՐՑԱԽԻ ԲԵՐԴԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՐԳԵՐԸ

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ, ԼԻՆԴԱ ՍԱՐԳՍՅԱՆ*

Հղման համար. Տիգրանյան, Մարիաննա, Սարգսյան, Լինդա: «Արցախի Բերդաշեն գյուղի հայրենասիրական երգերը»: *Արվեստագիտական հանդես*, N 1 (2024): 73-85. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-73

Արցախ աշխարհին իր հարուստ պատմամշակութային կյանքով տարածաշրջանի կարևորագույն օղակներից է, որն ամբողջ պատմության ընթացքում անքակտելիորեն կապված է եղել Հայաստանի հետ: Ողբերգական զարգացմամբ պատմական իրադարձությունները, տարածքային կորուստներն ու արցախցուն բաժին հասած փորձությունները շարունակվեցին մեր օրերում և XXI դարում. հարկադրաբար տեղահանված մեր հայրենակիցները, լքելով իրենց տներն ու հայրենիքը՝ ստիպված եղան բռնել գաղթի ճանապարհը: Այդուհանդերձ, իր բազմադարյա պատմության ընթացքում Արցախն ունեցել է նաև հաղթական էջեր, որից մեկը՝ 1991-1994 թվականներին Հայոց Ազգային բանակի բացարձակ հաղթանակն ու Արցախի ազատագրումն էր, որն արտացոլում գտավ ժողովրդական երգաստեղծության մեջ: 1994-ին Մարտունու շրջանի Բերդաշեն գյուղում իրականացված բանահավաքչական աշխատանքների արդյունքում ծայնագրվել են հայրենասիրական չորսը երգեր՝ «Մեռնիմ հողիդ, անուշ Արցախ», «Հորս փունը այսպեղ է», «Գեղաշենցի Թաթուլ» և «Իմ բերդաքաղաք Շուշի», որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ծայնագրարանում և հրատարակվում են առաջին անգամ: Ցավոք, գիտարշավի մասին տեղեկություններ չեն պահպանվել. նշված չեն արշավախմբի ղեկավարի անունը, ինչպես նաև բանասաց Զոյա Հովնանի մասին տվյալները: Այդուհանդերձ, ծայնագրված երգերը չեն կորցում իրենց պատմական արժեքն ու կարևորությունը և համալրում են մեր կողմից արցախյան ավանդական երաժշտական մշակույթի հավաքագրած օրինակների ցանկը:

Բանալի բառեր՝ Արցախ, Բերդաշեն, Շուշի, հայրենասիրական երգեր, Զոյա Հովնան, Թաթուլ Կրպեյան, փյուղիական ծայնակարգ:

Ներածություն

Արցախյան ազատագրական շարժումը հայ ժողովրդի ինքնության պահպանման և հայրենի հողում ազատ ապրելու հերոսական պատմությունն է: Թշնամին, վարելով արցախահայության ահաբեկման քաղաքականություն, դառնելով շարունակ իրականացրել է զանգվածային ջարդեր: 1988 թ. փետրվարին Սումգայիթ քաղաքում Խորհրդային Ադրբեջանը սկսեց հայերի մասսայական կոտորածը, ինչը շարունակվեց հանրապետության այլ քաղաքներում ևս: Միաժամանակ, 1989-ից սկսած, Ադրբեջանը շրջափակման ենթարկեց Լեռնային Ղարաբաղը՝ իրականացնելով հարձակումներ գյուղերի վրա, տղամարդկանց ձերբակալություններ և այլն: Գտնվելով ծանրագույն վիճակում՝ արցախցիները

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնի դասախոս, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, tigranyan.marianna@mail.ru, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի մագիստրատուրայի ուսանող, linda.sargsyan31@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 31.03.2024, գրախոսելու օրը՝ 06.05.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

չլքեցին իրենց հայրենիքը, կազմակերպեցին ինքնապաշտպանական մարտեր և ձևավորելով ավելի քան 10 ջոկատներ՝ անհավասար պայքարի մեջ մտան թշնամու գերազանցող բանակի դեմ: Ուժերի վերախմբավորումից հետո Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակին հաջողվեց ռազմաճակատում գրանցել հաջողություններ: Արդյունքում՝ Ադրբեջանի կողմից ձեռնարկած նոր հարձակումները խափանվեցին, կրելով լիակատար ռազմական պարտության: Հայտնվելով իշխանությունը կորցնելու շեմին Ադրբեջանի ղեկավարությունը հարկադրված էր 1994 թ. մայիսին գնալ Ռուսաստանի միջնորդությամբ անժամկետ հրադադարի կնքմանը [2, էջ 51-80]:

Բերդաշեն գյուղի կյանքն ու ազատագրական պայքարը

Արցախ աշխարհի հնագույն բնակավայրերից մեկը Բերդաշեն¹ գյուղն է, որն առանձնանում է բարեբեր հողերով, տեղական առատ բերքով, ինչպես և հարուստ բանավոր արվեստով, երգ ու պարով, ավանդազրույցներով: Բերդաշենցիների հիմնական զբաղմունքը եղել է խաղողագործությունը, գինեգործությունը և առհասարակ՝ գյուղատնտեսությունը: Մակար Բարխուդարյանը² նշում է, որ բնակիչների գերակշիռ մասը եղել են բնիկներ և Մելիք Շահնազարյանների ժամանակ Բերդաշենը ենթաշրջանային գյուղի դեր է ունեցել [4, էջ 122]: Դարեր ի վեր թշնամիների համար տարածաշրջանը մեծ հետաքրքրություն է ներկայացրել, և տեղացիները, պաշտպանական նկատառումներից ելնելով, ստիպված են եղել կառուցել բերդեր, որից ամենանշանավորը Աղջկաբերդն է (կոչվել է նաև Հինգ շեն) [3, էջ 410]: 1236-ին մոնղոլների՝ դեպի Արցախ իրականացրած արշավանքի ժամանակ ավերվել է նաև Բերդաշենի Աղջկաբերդը: Հետագայում՝ բերդի ստորոտում իրականացված հնագիտական պեղումների արդյունքում գտնվել են մեծ քանակությամբ մոնղոլական դրամներ, ինչպես նաև բերդից հարավ ընկած մի հողատարածք, որը մինչ վերջերս էլ հայտնի էր Մուղուլեն կամ Մողոլեն բաղ անուններով [3, էջ 411]:

Բերդաշեն գյուղն իր ավանդն ու արժանի մասնակցությունն է ունեցել Հայրենական մեծ պատերազմում, որտեղ ռազմաճակատ են մեկնել 463 տեղացի, նրանցից 13-ը՝ կին: 1990-ականներին, գտնվելով ամենաթեժ վայրում, առճակատման առաջին օրից, բերդաշենցիները ձևավորեցին կամավորական ջոկատ, որն էլ Նելսոն Սոդոմոնյանի հրամանատարությամբ դարձավ Բերդաշենի

¹ Տարածում է ունեցել նաև՝ Կարաքենդ, Աղվանաբերդ, Ղզլաղա և այլ անվանումներով [5, էջ 33]:

² Մակար Եպիսկոպոս Բարխուդարյան (1832, Արցախ, Խնածախ - 1906, Նախիջևան)՝ գրող, հնագետ, ազգագրագետ: Ծանոթ լինելով ժողովրդի կյանքին և կենցաղին Մ. Բարխուդարյանը շրջել է պատմական Արցախում և հավաքագրել ավանդություններ, զրույցներ, առած-ասացվածքներ, հանելուկներ, որոնք լույս են տեսել ինչպես առանձին, այնպես էլ իր գեղարվեստական և պատմագիտական ստեղծագործություններում: Մ. Բարխուդարյանի առաջին ստեղծագործությունները վիպական բնույթ ունեն և գրված են արցախյան բարբառով. դրանցից են՝ «Արազը տարին կատարի», «Պըլը-Պուրի», «Չոբանն ու նշանածը», «Բարոյական առածներ» [6, էջ 6]:

գումարտակը: Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին իրենց կյանքը տվեցին 31 քաջորդիներ. Էռնիկ Գևորգյանը, Կարո Պողոսյանը, Աշոտ Ավետիսյանը, Ալիկ Միրզաբեկյանը և այլ հերոսներ, որոնց անունները ոսկե տառերով գրվել են մեր պատմության հերոսական էջերում [3, էջ 413]:

Բերդաշենի հայրենասիրական երգերը (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի Ա. Քոչարյանի անվան ծայնադարան)

Բովանդակային առումով հայրենասիրական և ռազմի երգերը մոտ են և իրենց ստեղծագործական հենքով և կազմավորմամբ կապված են պատմական իրադարձությունների ու նշանավոր անհատների գործունեության հետ, որտեղ արտացոլում է գտել ժամանակի իրականությունը: Ժողովրդական երգաստեղծության տվյալ խմբում զգալի թիվ են կազմում մարտիկ հերոսներին նվիրված գովքերը, քայլերգերը, ինչպես նաև զինվորին նվիրված քնարական երգերը: Բանահյուսական այս ժանրում կատարած իր ուսումնասիրության մեջ բանագետ, ժողովրդագետ Ալվարդ Ղազիյանը գրում է. «Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգերի գոյության վաղեմությունն են հաստատում նաև միջնադարից մեզ հասած ռազմի երգերի հատուկենտ նմուշները, պատմական զրույցները ու դրանց վերաբերյալ վկայությունները» [7, էջ 5-7]:

Արցախի Բերդաշեն գյուղում 1994-ին ծայնագրած չորս երգերի բանասացը Զոյա Հովնանն է (հավանաբար Հովնանյան)³:

«Մեռնիմ հողիդ, անուշ Արցախ» երգը հանուն հայրենիքի պայքարելու հերոսական մարտակոչ է:

№ 1 ՄԵՐՆԻՄ ՀՈՂԻԴ, ԱՆՈՒՇ ԱՐՑԱԽ

♩=126

Մեռ - նիմ հո - ղիդ ա - նուշ Ար - ցախ,
Ծո - վոդ ար - ցունք ա - ղի ու դարդ,
Այն, ե՛րբ պի - տի քո մար - մի - նոդ,
Լըց - վի առ - վի մայ - բա - նը - ման:
Մեռ - նիմ հո - ղիդ, վեր - քն - բոզ շատ,
Ար - ցուն - քի ծով, ա - փերն ան - հատ:

³ Նոտային և տեքստային վերծանությունները կատարել է Մարիաննա Տիգրանյանը, 2023 թ. դեկտեմբերին:

Երգը զարգանում է տերցիային հիմք ունեցող փոյուզիական ծայնակարգում: Հարկ է նշել, որ տվյալ ծայնակարգը խիստ տիպական է ոչ միայն Արցախյան հոռովելների՝ որպես ժողովրդական երգաստեղծության հնագույն տեսակի [9], այլ ամբողջ Հայոց աշխարհի ավանդական երաժշտության համար: Այս մասին ականավոր երաժշտագետ Քրիստափոր Քուշնարյանը գրել է. «Տերցիային օժանդակ հենքով փոյուզիական լադը հայկական մոնոդիկ երաժշտության ամենահին համակարգերից մեկն է: Այն օգտագործվում է իր բոլոր ճյուղերում: Ցուցաբերելով մեծ դիմացկունություն, հետագա դարերի ընթացքում այն թափանցել է հայկական մոնոդիայի բոլոր շերտերը» [10, էջ 424-425]:



Երգին բնորոշ է պարայնությունը (6/8 մետր) և անպաճույճ գեղջկական քնարական բնույթը: Բանաստեղծական տեքստը յամբական երկանդամ 8-վանկանի ոտանավոր է՝ 4+4 տաղաչափությամբ, որտեղ գլխավոր շեշտերը 4-րդ և 8-րդ վանկերի վրա են, որոնք երկերկու միանալով առաջ են բերում երկու բարդ ոտքեր: Քանի որ հայոց լեզվի մեջ բառերի շեշտը մեծ մասամբ ընկնում է վերջին վանկի վրա, ապա հեշտությամբ առաջ են գալիս յամբական ոտքերով ոտանավորներ, որը ռիթմիկ երաժշտականության տեսակետից մեր չափերի մեջ սիրված ոտանավորներից լավագույնն է [1, էջ 168]:

Մեռնի՛մ հողի՛դ (4), անու՛շ Արցա՛խ (4), (8)
 Ծովդ արցունք (4), աղի՛ ու դա՛րդ (4), (8)
 Ա՛խ, ե՛րբ պիտի՛ (4) քո մարմի՛նդ (4), (8)
 Լցվի՛ առվի՛ց (4) մայրանմա՛ն: (4) (8)

Կրկներգ

Մեռնիմ հողիդ, վերքերդ շափ, (8)
 Արցունքի ծով, ափերն անհափ: (8)

Խաչքարերդ երգ են սգո, (8)
 Ինքնայրումի վերքեր անթիվ, (8)
 Մի՞ թե ընտրած ճամփեն ա մեր, (8)
 Արցունքներով հազարաթիվ: (8)

Կրկներգ.

Ինքդ քեզնից խաբված, խլված, (8)
 Ինքդ քեզ հեփ հաշփ ու անհաշփ, (8)
 Ձեռքդ մեկնած հասկին այրվող, (8)
 Սիրտդ առափ հաց ու Աստված: (8)

Կրկներգ.

Երկանդամ ութվանկանի ոտանավորն ամենից վաղ կիրառել են Գրիգոր Նարեկացին («Տաղ Ծննդեան», «Աւերիս») և Ներսես Շնորհալին (Հռիփսիմյանց տաղ «Երջանի՛կ հոգիհրաշ»), իսկ XIX դարում Հայր Ղևոնդ Ալիշանն ու Մկրտիչ Պեշկեթյանը [1, էջ 173-175]: Ժողովուրդը չի մոռանում ազգի համար իրենց կյանքը տված հերոսներին... Հայրենասիրական երգերում քիչ չեն օրինակներ, որտեղ անմահացել են Անդրանիկ Զորավարը, Գարեգին Նժդեհը, Գևորգ Զառչը, Աղբյուր Սերոբը և շատ ուրիշ քաջագուն հայորդիներ: Հայրենասիրական երգեր ստեղծվեցին նաև Արցախյան պատերազմի հերոսների հիշատակին: Բերդաշեն գյուղում ծայնագրված հաջորդ դիտարկվող երգը նվիրված է Ազգային հերոս Թաթուլ Կրպեյանին⁴, ով Արցախյան ազատամարտի ժամանակ եղել է Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատար:

№ 2 ԳԵՏԱՇԵՆՑԻ ԹԱԹՈՒԼ

♩ = 84

2ին - վոր սա - թին թինկ էր տը - վե,
Գե - տա - շեն - ցին հույս էր պա - հե,
Ա - վա - րայր է զե - տից ան - դին,
թի - կուն - թում էր Թա - թուլ որ - դին:
Զար - կի՛ր, Թա - թուլ, թու - ըրդ կըտ 3 - թուլ,
Զար - կե՛ք, իմ հայ քա - ջնր ան - պարտ,
Գե - տա - շեն - ցն պա - հեք ա - մուր,
Ո՛հ մի քայլ ետ, ո՛չ մի քայլ ետ:

⁴ Թաթուլ Կրպեյան (1965, Թալինի շրջան - 1991, Գետաշեն)՝ Արցախյան ազատամարտի մասնակից, Հայաստանի ազգային հերոս: Արցախյան ազատամարտի ժամանակ՝ 1990 թվականի սեպտեմբերից մինչև 1991 թվականի մայիս ամիսը, եղել է Գետաշենի ենթաշրջանի (Գետաշեն-Մարտունաշեն) ինքնապաշտպանության ընդհանուր հրամանատարը: 1972-1982 թթ. սովորել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, այնուհետև՝ Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում (1987-1990): Համալսարանի չորրորդ կուրսում Թաթուլը միացել է Հայկական ազատագրական շարժմանը: 1987-1989 թվականներին Թաթուլը նաև եղել է Արցախը Հայաստանի հետ վերամիավորելուն ուղղված «Միացում» կազմակերպության անդամ: Երևանի պետական համալսարանում սովորելուն զուգահեռ երգել է «Մարաթուլ» ազգագրական երգի-պարի համույթում, հավաքագրել ու մոռացությունից փրկել է ժողովրդական և ազգային-ազատագրական պայքարի մասին երգեր ու պարեր: Երևանի պետական համալսարանում հիմնադրել է «Կարս» ազգագրական երգի-պարի համույթը:

Տաղաչափությամբ դարձյալ յամբական երկանդամ ոտանավոր է:

Զինվոր սարին թինկ էր տվել, (8)
 Ավարայր էր գեպից անդին, (8)
 Գեղաշենցին հույս էր պահել, (8)
 Թիկունքում էր Թաթուլ որդին: (8)

Կրկներգ

Զարկի՛ր, Թաթուլ, թուրդ կտրուկ, (8)
 Զարկե՛ք, իմ հայ քաջեր անպարտ, (8)
 Գեղաշենը պահենք ամուր, (8)
 Ոչ մի քայլ ետ, ոչ մի քայլ ետ: (8)

Ամեն մի մարդ հայ է, որդի, (8)
 Մայրերն Աստված կանանչ արին, (8)
 Զրիչները ինչպես արծիվ, (8)
 Պիպի փրկեն հողն Արցախի: (8)

Կրկներգ

Անառիկ էր Գեղաշենը, (8)
 Լույս էր կաթում ամեն տնից, (8)
 Զորքը եկավ, ջնջեց տարավ, (8)
 Թաթուլ զոհվեց սև գնդակից: (8)

Կրկներգ.

Քայլերգային բնույթը պայմանավորված է 4/4 չափով, ինչն առավել շեշտվում է կրկներգի հայ զինվորին քաջալերող և դեպի հաղթանակ տանող հերոսական կոչերով:

«Գեղաշենցի Թաթուլ» երգը զարգանում է տերցիային հիմք ունեցող հիպո-փոյուզիական ձայնակարգում:



№ 3 ՀՈՐՍ ՏՈՒՆԸ ԱՅՍԵՂ Է

♩=88

Հո - րըս տու - նը այս - տեղ է, ա - նու - նը Ար - ցախ,
Հայ - րըս նը - րա զին - վորն է, շատ քաջ ու ան - վախ,
Սի - րում եմ քեզ հայ - րե - նիք, դու իմ օ - րո - րոց
Քո գալիքին եմ երջանիկ, իմ կյանքի դպրոց:

Հորս տունը այստեղ է, անունը՝ Արցախ, (7+5)
Հայրս նրա զինվորն է, շատ քաջ ու անվախ: (7+5)
Սիրում եմ քեզ հայրենիք, դու իմ օրորոց, (7+5)
Քո գալիքին եմ երջանիկ, իմ կյանքի դպրոց: (7+5)

Ունեմ երկու մայր անգին, աննման ու թանկ, (7+5)
Զեմ թողնի որ թշնամին....
Սիրում եմ քեզ հայրենիք, դու իմ օրորոց, (7+5)
Քո գալիքին եմ երջանիկ, իմ կյանքի դպրոց: (7+5)

«Հորս տունը այստեղ է» օրինակը դարձյալ յամբական ոտանավորի տե-
սակ է՝ 7+5 վանկանի շարադրանքով: Մեղեդիական հատվածը զարգանում է
պարզ, կրկնվող մոտիվներով, ինչն ապահովում են ութերորդականների սա-
հուն անցումները: Երգը շարադրված է տերցիային հենքով (–f–) հարմոնիկ
մինորում, որտեղ գերիշխում է սուբդոմինանտային ֆունկցիան: Մեղեդին զար-
գանում է սեկունդային քայլերով, որոնք «պտտվում են» տերցիային տոնի
շուրջը, ինչը հաղորդում է ավելի մեղմ և միևնույն ժամանակ քայլերգային
տրամադրություն: Այդուհանդերձ՝ այստեղ շատ հստակ դրսևորվում են հարմո-
նիկ մինորի գլխավոր ֆունկցիաները՝ **t-s-D**, թեև պլագալ կադանսի գերիշ-
խումն ակնհայտ է:



Երգն իր կառուցվածքով և լեզվամտածողությամբ պարունակում է քաղաքային ֆոլկլորին բնորոշ տարրեր: Ոճական այս ուղղության մասին երաժշտագետ Արաքսի Սարյանը գրում է. «Այդ ֆոլկլորը, ձևավորվելով հայ ժողովրդի հասարակական կյանքի որոշակի պայմաններում, իր գաղափարա-գեղարվեստական բովանդակությամբ, երաժշտական-ոճական առանձնահատկություններով ներկայացնում է որակական նոր արտահայտություն: Գեղջկականի նման, քաղաքային երգը նույնպես կոլեկտիվ ստեղծագործություն է: Հորինվելով մեկ անհատի կողմից, այն բանավոր երգաստեղծության ձևով անցնելով մի կատարողից մյուսին՝ հղկվում, գեղարվեստականորեն կատարելագործվում է մասսայական ստեղծագործությամբ և ժամանակի ընթացքում ընտրվում և տարածվում իր առավել մատչելի, հուզական, ներգործուն տարբերակներով» [8, էջ 3-4]: Երգն առանձնանում է նաև իր վանկաչափությամբ (7+5), որն առաջացնում է տեքստում անհամաչափություն. «Յամբական եռանդամի 12-վանկանի երկու անապեստի սխեման է՝ $3+4+5=3+(2+2)+(3+2)$: Սկզբի անապեստի փոխանակ քողաբորբ ոտքը ('ս') ավելի է զորացնում ոիթմը: Բայց և այնպես ոտանավորն իր անհավասար անդամներով ունի կաղ ընթացք» [1, էջ 191]: Նմանատիպ օրինակներ հանդիպում ենք երգիծական երգի ժանրում (այդպիսի նմուշ է. «Էն դիզան» հարսանեկան երգը):

Գիտարշավի վերջին՝ չորրորդ օրինակը «**Իմ բերդաքաղաք Շուշի**» երգն է, որը նվիրված է հայոց անառիկ բերդի հաղթական պայքարին: Նմուշն իր ծավալով, զարդույթուն մոտիվներով և հարուստ մեղեդիական դարձվածքներով տարբերվում է վերը ներկայացված երգերից: Երգը զարգանում է կվինտային օժանդակ հենակետով փոյուզիական ծայնակարգում:



Երգը 10-վանկանի պարզոտնյա յամբական ոտանավոր է, որը հայերենում ամենահին ժամանակներից սկսած, ինչպես նաև հին հունական բանաստեղծության մեջ, հորինվել և արտասանվել է բարդ ոտքերով [1, էջ 147-151]: Այս յամբական տաղաչափության համար տիպական են երկու գլխավոր շեշտերը 4-րդ և 10-րդ վանկերի վրա: Նշված ոտանավորը պահպանվել է մեր հին հոգևոր երգերում՝ շարականներում:

№ 4 ԻՄ ԲԵՐԴԱՔԱՂԱՔ ՇՈՒՇԻ

$\text{♩} = 46$

Իմ ճա - նա-պարհն է հետ ճրկ - վում դե - պի վեր,
 Կյան - քի թե - լն - րը ի - ռար ա - զու - ցող,
 Հայ - մար - տիկ - ներն են նետ-վում զը - րո - հի,
 Իմ բեր - դա քա - դաք Շու - շի իմ հա - յոց:
 Ե - թագ էր ընկ - նում սուրբ ա - զա-տու - թյուն,
 Կյան - քը, թե զո - հը մեր հայ - րե - նի - քին,
 Սա - կան դա - վա - դիր թուր - քը դի - մա - կով,
 Կար - կուտ է մա - դել ձեր ե - թագ - նե - րին:
 Քա - նի, քա - նի, կյան-քում ահ - եք տե - - - սե,
 Մար - տիկ - ներ իմ քաջ հա - հոց աշ - խար հի,
 Ար-ցախն է հի - մա ցըն - ծում ան - ար - գեղիք,
 Եվ մո - մեր վա - ռում վան-քում հա - վա - տի:

Իմ ճանապարհն է ձգվում դեպի վեր	(10)
Կյանքի թելերը իրար ագուցող,	(10)
Հայ մարտիկներն են նետվում գրոհի,	(10)
Իմ բերդաքաղաք Շուշի, իմ հայոց:	(10)
Երազ էր ընկնում Սուրբ Ազատության,	(10)
Կյանքը, թե զոհը մեր հայրենիքին,	(10)
Սակայն դավադիր թուրքը դիմաքող,	(10)
Կարկուտ է մաղել ձեր երազներին:	(10)
Քանի՛, քանի՛ կյանքում ահ եք տեսել,	(10)
Մարտիկներ իմ քաջ հայոց աշխարհի,	(10)
Արցախն է հիմա ցնծում անարգելք,	(10)
Եվ մոմեր վառում վանքում հավատի:	(10)
Եվ հայոց հոգին ձեր ըմբոստացավ,	(10)
Հանեց հայ սուրբին թուրքի ճանկերից,	(10)
Հայոց եռագույն դրոշը շողաց,	(10)
Հայ եկեղեցու վսեմ գագաթին:	(10)

Արրասանում է. Մատաղներ կանե՛ք ջահել աղջիկներ,
Եվ մայրեր այրի, մոմեր վառեցեք⁵:

Եզրակացություն

Արցախ աշխարհի Բերդաշեն գյուղի ազատագրական պայքարի տարիներին տարածում գտած այս երգերը պատկերացում են տալիս ժողովրդի և զինվորների հերոսական ոգու, ինչպես նաև ժանրային մտածողության մասին: Ինչպես արդեն նշվել է, անհայտ բանահավաքը երգերի ստեղծման մասին, ինչպես և բանասաց՝ Զոյա Հովնանի վերաբերյալ ոչ մի տեղեկություն չի թողել: Բանաստեղծական և երաժշտական մտածողության առումով ներկայացված չորս երգերը բավականին տարբեր են և դժվար է ասել՝ պատկանում են դրանք նույն հեղինակին, թե ոչ: Երգային օրինակներից երեքում հանդիպում ենք հայ ժողովրդական գեղջկական երգամտածողության ամենահին դրսևորմանը՝ *փոյուզիական ծայնակարգին*: Բերդաշեն գյուղի հայրենասիրական երգերը, ինչպես նաև Արցախ աշխարհի ավանդական երաժշտությանը վերաբերող մեր նախորդ ուսումնասիրությունները (հոռովելներ, օրորներ) կրկին փաստում են, որ վերը նշված ծայնակարգը տվյալ տարածաշրջանում լայն տարածում է ունեցել:

⁵ Երգն ավարտվում է երրորդ տան («Քանի՛, քանի՛...») կրկնությամբ:

Գրականություն

1. Աբեղյան Մ. Երկեր, հ. Ե (8 հատորով), Հայոց լեզվի տաղաչափություն (Մետրիկա), խմբ.՝ Աղայան Է., Հակոբյան Հ., Հարությունյան Բ. Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1971, 511 էջ:
2. Աբրահամյան Հ. Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Գ. Ստեփանակերտ, «Դիզակ պլյուս», 2007, 744 էջ:
3. Բալայան Վ. Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր. Երևան, «Ջանգակ», 2020, 750 էջ:
4. Բարխուդարյան Մ. Արցախ, Բագու, տպարան «Արոր», 1895, 300 էջ:
5. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3 (5 հատորով), կազմ.՝ Հակոբյան Թ. Մելիք-Բախշյան Ս. Երևան, Համալսարանի հրատ., 1991, 992 էջ:
6. Ղազիյան Ա. Արցախ, Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 15. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 192 էջ:
7. Ղազիյան Ա. Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր. Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1989, 392 էջ:
8. Սարյան Ա. Հայ քաղաքային ժողովրդական երգերի հատընտիր. Երևան, «Կոմիտաս», 2010, 196 էջ:
9. Տիգրանյան Մ., Սարգսյան Լ. Արցախյան հոռովելներ, «Արվեստագիտական հանդես», 2021, N 2, էջ 123-134:
10. Кушнарев Х.С. Вопросы истории и теории армянской монодической музыки, ред. Р. Атаян. Ленинград, Гос. муз. изд., 1958, 626 с.

References

1. Abeghyan M. Erker, h. E (8 hatorov), Hayoc lezvi taghachaputyun (Metrika), xmb. Aghayan E., Hakobyan H., Harutyunyan B. Yerevan, HSSH GA, 1971, 511 ej.
2. Abrahamyan H. Martnchogh Arcaxy 1917-2000, girq G. Stepanakert, "Dizak plyus", 2007, 744 ej.
3. Balayan V. Arcaxi Hanrapetutyan bnakavayreri patmutyan urvagcer. Yerevan, "Zangak", 2020, 750 ej.
4. Barxudaryan M. Arcax, Bagu, tparan "Aror", 1895, 300 ej.
5. Hayastani ev harakic shrjanneri teghanunneri bararan, h. 3 (5 hatorov), kazm. Hakobyan T. Meliq-Baxshyan S. Yerevan, Hamalsarani hrat., 1991, 992 ej.
6. Ghaziyani A. Arcax, Hay azgagrutyun ev banahyusutyun, h. 15. Yerevan, HSSH GA hrat., 1983, 192 ej.
7. Ghaziyani A. Hay jhoghovrdakan r'azmi ev zinvori erger. Yerevan, HSSH GA hrat., 1989, 392 ej.
8. Saryan A. Hay qaghaqayin jhoghovrdakan ergeri hatyntir. Yerevan, "Komitas", 2010, 196 ej.
9. Tigranyan M., Sargsyan L. Arcaxyan horovelner, "Arvestagitakan handes", 2021, № 2, ej 123-134.
10. Kushnarev H.S. Voprosy istorii i teorii armjanskoj monodicheskoj muzyki, red. R. Atajan. Leningrad, Gos. muz. izd., 1958, 626 s.

ПАТРИОТИЧЕСКИЕ ПЕСНИ СЕЛА БЕРДАШЕН АРЦАХА

МАРИАННА ТИГРАНЯН, ЛИНДА САРГСЯН *

Для цитирования: Тигранян, Марианна, Саргсян, Линда. «Патриотические песни села Бердашен Арцаха». *Искусствоведческий журнал*, N 1 (2024): 73-85. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-73

Арцах с его богатой исторической и культурной жизнью является важнейшим звеном региона, на протяжении всей истории неразрывно связанным с Арменией. Трагические события с территориальными потерями и другими бедами продолжают преследовать народ Арцаха и сегодня, в XXI веке. Вследствие насильственного переселения наши соотечественники, оставив дома и родную землю, встали на путь вынужденной эмиграции. Однако в многовековой истории Арцаха, помимо трагических, были и триумфальные страницы, в частности – безоговорочная победа Армянской Национальной Армии в 1991-1994 гг. и освобождение Арцаха, нашедшие отражение в народном фольклоре.

Во время частных экспедиций 1994 года в селе Бердашен Мартунинского района были записаны четыре патриотические песни: «*Твоя умирающая земля, любимый Арцах*», «*Здесь мой отчий дом*», «*Татул из Геташена*» и «*Моя крепость, Шуши*». Они хранятся в Фонотеке имени А. Кочаряна Института искусств НАН РА и издаются впервые. К сожалению, дополнительной информацией о данной научной экспедиции мы не располагаем: нет сведений ни о руководителе экспедиции, ни об информанте Зое Овнан. Однако это обстоятельство ни в коей мере не умаляет историческую значимость записанных песен, пополнивших обширный список собранных нами образцов традиционной музыкальной культуры Арцаха.

Ключевые слова: Арцах, село Бердашен, Шуши, патриотические песни, Зоя Овнан, Татул Крпеян, фригийский лад.

* Старший научный сотрудник отдела народной музыки Института искусств НАН РА, преподаватель Ереванской государственной консерватории имени Комитаса, кандидат искусствоведения, доцент, tigranyan.marianna@mail.ru, студентка магистратуры Ереванской государственной консерватории имени Комитаса, linda.sargsyan31@mail.ru, статья представлена 31.03.2024, рецензирована 06.05.2024, принята к публикации 03.06.2024.

PATRIOTIC SONGS OF BERDASHEN VILLAGE OF ARTSAKH

MARIANNA TIGRANYAN LINDA, SARGSYAN*

For citation: Tigranyan, Marianna. Sargsyan, Linda. "Patriotic songs of Berdashen village of Artsakh", *Journal of Art Studies*, N 1 (2024): 73-85. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-73

Artsakh, with its rich historical and cultural life, is a most important part of the region, which throughout its history has been inseparably linked to Armenia. Tragic developments with territorial losses and other miseries continue for the people of Artsakh today, in the XXI century. As a consequence of forced displacement, our compatriots had to abandon their homes and homeland and to take the path of migration. However, along with tragic events, there were also triumphant pages in the centuries-old history of Artsakh, particularly, the unconditional victory of the Armenian National Army in 1991-1994 and the liberation of Artsakh, which could not but be reflected in folklore.

During private expeditions of 1994 to Berdashen village of Martuni region, four patriotic songs were recorded: "Your dying land, dear Artsakh", "My father's home is here", "Tatul from Getashen" and "Shushi, my fortress". They are stored in the A. Kocharyan archive of NAS RA Institute of Arts and are published for the first time. Regrettably, no further facts on this scientific expedition are available: there is a lack of information about both the head of the expedition and the folk song bearer Zoya Hovnan. This notwithstanding, the recorded songs remain historically significant and complete the extensive list of the collected by us examples of traditional musical culture of Artsakh.

Key words: Artsakh, Berdashen village, Shushi, patriotic songs, Zoya Hovnan, Tatul Krpeyan, Phrygian mode.

* Senior researcher at the Department of Folk Music of NAS RA Institute of Arts, Lecturer at the Yerevan State Conservatory named after Komitas, Doctor of Arts, Associate Professor, tigranyan.marianna@mail.ru, Master's student at Yerevan State Conservatory named after Komitas, linda.sargsyan31@mail.ru. The article was submitted on 31.03.2024, reviewed on 06.05.2024, accepted for publication on 03.06.2024.